

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԸ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՆՅՈՒԹԵՐՈՒՄ**

(XIX դ. - XX դարասկիզբ)

**Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու՝
աշխատասիրությամբ Ա. Ս. Հայրապետյանի**

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 2011

ՀՏԴ 941 (479. 25) : 31
ԳՄԴ 63. 3 (2Հ) + 60.6 + 60.7
Ա 296

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտական խորհուրդների որոշմամբ

Ա 296 Ալեքսանդրասյուրի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.–XXդարա-
սկիզբ). փաստաթղթերի և նյութերի ժողովածու / ՀՀ ԳԱԱ; Աշխատասիրությանը՝
Ա.Ս. Հայրապետյանի.- Եր.: Գիտություն, 2011- 271 էջ:

Ժողովածուն արխիվային վիճակագրական փաստաթղթերի հարուստ հավա-
քածու է՝ բաղկացած 325 աղյուսակներից, որոնք վերաբերում են քննության ենթակա
ժամանակահատվածում Ալեքսանդրասյուրի գավառի բնակչության էթնոկոնֆեսիոնալ
իրավիճակի, բնակավայրերի տեղագրության, բնակչության տեղաշարժերի, նրա ազ-
գային կազմի խնդիրներին, ինչպես նաև լույս են սփռում ամբողջ XIXդ. ընթացքում և
XX դարասկզբին արևմտահայերի՝ դեպի գավառ պարբերաբար կրկնվող գաղթերի, ըստ
բնակության նոր վայրերի գաղթականների տեղաբաշխման և գավառի բնակչության
էթնոկոնֆեսիոնալ պատկերի վրա այդ գաղթերի թողած ազդեցության վրա:

Ժողովածուն հասցեագրվում է ժողովրդագրության հարցերով զբաղվող պատ-
մաբաններին, այլև բուհերի մասնագիտական բաժինների ուսանողներին և ընթերցող
հանրությանը:

ՀՏԴ 941 (479. 25) : 31
ԳՄԴ 63. 3 (2Հ) + 60.6 + 60.7

ISBN 978-5-8080-0898-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2011

© Հայրապետյան Ա.Ս., 2011

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Վերջին տարիներին, գերազանցապես պայմանավորված ժողովրդագրական նոր գործընթացներով, նաև հարցի գիտաքաղաքական կարևորությամբ, զգալիորեն աճել է հետաքրքրությունը ժողովրդագրական խնդիրների նկատմամբ: Այդ է պատճառը, որ դեռևս 2005թ. մենք ձեռնամուխ եղանք ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից հրատարակվող «Գիտական աշխատություններ» հանդեսում պարբերաբար վեր հանելու, հնարավորության դեպքում լրացնելու և հրապարակելու նմանօրինակ փաստաթղթերի շարք: Ժողովրդագրական հիմնախնդիրներին վերաբերող արխիվային այդ փաստաթղթերը, իրենց անխուսափելի բացթողումներով ու թերացումներով հանդերձ, կարևորագույն տեղեկություններ են հաղորդում XIXդ. երկրորդ կեսի և XX դարասկզբի Արևելյան Հայաստանի հյուսիսային հատվածի բնակավայրերի քանակի, բնակչության ազգային ու դասակարգային կազմի, նրա կենսաբանական և մեխանիկական շարժի և այլնի մասին: Մանավանդ ակնհայտ է, որ վերոբերյալ հիմնահարցերի ուսումնասիրությունը հիմնականում դուրս է մնացել հայագետների ուշադրությունից: Այնպես որ թեման արժևորվում է նաև այն իմաստով, որ հայագիտության առավել թույլ ուսումնասիրված բնագավառներից է:

Այս ուսումնասիրությունը, որ ներկայացնում ենք ընթերցողի դատին, նվիրված է Ալեքսանդրապոլի գավառի բնակավայրերի ու ազգաբնակչության տեղաբաշխման, Ռուսական կայսրության կողմից այստեղ վարվող ժողովրդագրական քաղաքականության, էթնիկ տեղաշարժերի, դրանց պատճառների և դրսևորման առանձնահատկությունների ըստ ամենայնի պարզաբանմանը: Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է հայ ազգաբնակչության լուրջ տեղաշարժերով և էթնոժողովրդագրական բուռն գործընթացներով աչքի ընկնող մի կարևորագույն պատմական ժամանակահատված՝ XIX դարի առաջին քառորդից մինչև 1917թ., գործընթացներ, որոնց հիմքում ընկած են տնտեսական և հատկապես քաղաքական մի շարք շարժառիթներ:

Գավառի պատմությանը, սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքին, Անդրկովկասի վարչատարածքային բաժանումների համակարգում նրան հատկացված դերակատարությանը և հատկապես էթնոժողովրդագրական իրավիճակին վերաբերող բազմաթիվ տեղեկություններն ուղղակի ցրված են վիճակագրական ժողովածուներում, արխիվային փաստաթղթերում և այլուր: Մեր նպատակն է ի մի բերել Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. և XX դարասկզբին վերաբերող ժողովրդագրական փաստերն ու տեղեկություն-

ները՝ հայտածելու համար գավառի տվյալ ժամանակաշրջանի էթնոժողովրդագրական հնարավորինս ամբողջական պատկերը:

Ընթերցողի դատին ներկայացվող աշխատությունը արխիվային վիճակագրական փաստաթղթերի հավաքածու է՝ բաղկացած բացառապես աղյուսակներից, և իրենից ներկայացնում է քննության ենթակա ժամանակահատվածում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության էթնոկոնֆեսիոնալ (ազգադավանաբանական) պատկերի, բնակավայրերի տեղագրության, բնակչության տեղաշարժերի, նրա ազգային կազմի տոկոսային հարաբերակցության դինամիկայի, ինչպես նաև XIX դ. ամբողջ ընթացքում և XX դարասկզբին արևմտահայերի պարբերաբար կրկնվող գաղթերի, ըստ բնակության նոր վայրերի գաղթականների տեղաբաշխման և երկրամասի բնակչության էթնոկոնֆեսիոնալ պատկերի վրա գաղթերի թողած ազդեցության մանրակրկիտ ու հանգամանալի ուսումնասիրություն:

Ալեքսանդրապոլի գավառի 1840-1917թթ. էթնոկոնֆեսիոնալ պատկերի քննությանը դեռևս մինչխորհրդային շրջանի պատմագիտության մեջ անդրադարձել են Ս.Էփրիկյանը, Գ.Ալիշանը, Պողոս վարդապետ Պետրոսյանը, Ե. Թովչյանը, Ն.Նիկողոսյանը, Գ.Վանցյանը և այլք¹: Այս կապակցությամբ հետաքրքիր նյութեր են հրատարակվել նաև «Կովկասյան օրացույց» և «Արևելյան մամուլ»² պարբերականների էջերում: Սակայն հիշատակությունների մեծագույն մասը կա՛ն անթվագիր է, կա՛ն էլ, սահմանափակվելով միայն առանձին բնակավայրերի մասին թուուցիկ տեղեկություններով, դրանք չեն կարող որևէ լուրջ ծառայություն մատուցել գավառի՝ խնդրո առարկա ժամանակահատվածի էթնոժողովրդագրական և մանավանդ կրոնադավանաբանական իրավիճակի քիչ թե շատ հանգամանալի ներկայացման խնդրում: Նշված հարցերն իրենց վերջնական լուծումը չստացան նաև խորհրդային և հետխորհրդային շրջանների պատմագիտական ուսումնասիրություններում: Թեև Խ.Ավդալբեկյանի, Ա.Հայթյանի, Վ.Ռշտունու, Հ.Մարգարյանի, Վ.Խոջաբեկյանի և մանավանդ Չ.Կորկոտյանի ու ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի աշխատակիցներ Ա.Համբարյանի, Գ.Առաքելյանի, Գ.Կիրակոսյանի և Ս. Մկրտչյանի

¹ Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա-Բ, Վենետիկ 1903-1907; Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրելալ ի Պօղոս վարդապետէ Պետրոսեան, Արարատ, Էջմիածին, 1870, 3-րդ տարի, թիւ Ա-Ը: Թովչեան Ե., Ալեքսանդրապոլի գավառ, «Աղբյուր», Թիֆլիս, 1896, 14-րդ տարի, N 7: Նիկողոսյան Ն., Վիճակագրական տեղեկություններ Ալեքսանդրապոլի գավառի հայ-լուսավորչականների մասին, «Մուրճ», Թիֆլիս, 1901, օգոստոս, N 8: Վանցյան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցյալից, «Մուրճ», Թիֆլիս, 1894, N 7-8:

² Տեղեկագրական պատառիկներ. Արևելեան մասն Շիրակայ, «Արևելյան մամուլ», Չմիւռնիս, 1898, 28-րդ տարի, թիւ 15- 24, Չմիւռնիս, 1899, 29-րդ տարի, թիւ 3-6:

աշխատությունները³ զգալի չափով լույս սփռեցին այս հիմնահարցերի պարզաբանման վրա, սակայն, միևրված լինելով ամբողջ Արևելյան Հայաստանի XIXդ.-XX դարասկզբի ժողովրդագրական դրության ուսումնասիրությանը, Ալեքսանդրապոլի գավառի հարցում տեղի են տվել նաև թվային անճշտությունների և բացթողումների: Չի կարելի բավարար համարել նաև քննվող ժամանակահատվածում արևմտահայերի պարբերաբար կրկնված գաղթերի, ըստ բնակության նոր վայրերի գաղթականության տեղաբաշխման և երկրամասի բնակչության էթնոկոնֆեսիոնալ պատկերի վրա դրանց թողած ազդեցության խիստ կարևոր հարցերի ուսումնասիրվածության մակարդակը: Արևմտահայության այդ տեղաշարժերը ոչ միայն վերականգնեցին Արևելյան Հայաստանի և մասնավորապես նրա հյուսիսային հատվածի բնակչության ժողովրդագրական նախկին հայեցի պատկերը, այլև, կազմակերպական ու իրականացման լուրջ թերություններով հանդերձ, օբյեկտիվորեն նպաստեցին տարածաշրջանի բնակչության մեջ հայ տարրի զգալի ավելացմանը, ազգային կազմի քանակական աճին ու որակական փոփոխմանը՝ Ալեքսանդրապոլի գավառը վերածելով հայ ժողովրդի մի ստվար հատվածի համար ազգահավաքման օջախի:

Առայսօր համեմատաբար լրջորեն է ուսումնասիրվել միայն 1829-1831թթ. արևմտահայ գաղթականության հարցը. Մինչխորհրդային շրջանում այդ խնդրին անդրադարձել են Ե.Գեղամյանցը, Գ.Աղանյանցը, Ալ.Երիցյանը, Եփրեմ Սեթը, Վ.Պոտտոն, Ս.Գլինկան, Կ.Բորոզդինը, Ն.Ֆլորովսկին, Ա.Գրիբոյեդովը⁴, խորհրդային և արդի շրջաններում՝ Ա.Մելքոնյանը, Հ.Մուրադյանը, Ե.Մանուկյանը, Կ.Հովհաննիսյանը, Մ.Դարբինյանը, մասամբ նաև մենք:⁵

³ Ավդաբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Եր., 1959: Հայթյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակները 1830-1920 թթ., Եր., 1989: Ռչտունի Վ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա (1828-1870 թթ.), Եր., 1960: Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Եր., 1979: Կորկոտյան Ջ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932: Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XXв., Ер., 2002: Արևելյան Հայաստանը 1916-1917թթ. մարդահամարներում, կազմողներ՝ Ա. Համբարյան, Գ. Առաքելյան, Գ. Կիրակոսյան, Ս. Սկրտչյան, Եր., 1992:

⁴ Գեղամյանց Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 3, մաս 1, Բաքու, 1909: Աղանեանց Գ. ք., Կարնո գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891: Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894: Կարապետյան Կ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Եր., 1974, N 2: Грибоедов А.С., Полное собрание сочинений, т. 3, СПб., 1917; Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 4, СПб., 1887; Глинка С., Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831; Бороздин К., Переселенцы в Закавказье, СПб., 1891; Обзорение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч.2, СПб., 1836.

⁵ Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Եր., 1994: Նույնի, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003: Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Եր., 2006: Մանուկյան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-

Մինչդեռ արևմտահայության արտագաղթը, շարունակվելով XIX դարի ամբողջ ընթացքում, XX դարասկզբին ընդունեց զանգվածային բնույթ:

Հետևաբար փորձել ենք Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվի թիվ 415 (Անդրկովկասյան վիճակագրական կոմիտե) և Հայաստանի ազգային արխիվի թիվ 28 (Կովկասի հայոց բարեգործական ընկերություն), 56 (Էջմիածնի Սուրբ լուսավորչական Սինոդ), 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), 93 (Երևանի արքունական պալատ), 94 (Երևանի նահանգային վարչություն և նահանգապետի գրասենյակ), 105 (Ալեքսանդրապոլի քաղաքային վարչություն, քաղաքային գործադիր կոմիտե, քաղաքի հողային տարածքների հայտնաբերման համար ստեղծված հանձնաժողով և միլիցիա), 125 (Երևանի նահանգային վիճակագրական կոմիտե), 163 (ՀԽՍՀ վիճակագրության պետական կոմիտե), 200 (Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարարություն), 201 (Հայաստանի առաջին Հանրապետության ներքին գործերի նախարարություն), 203 (Հայաստանի առաջին Հանրապետության գյուղատնտեսության և պետական գույքի նախարարություն), 222 (Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդ) ֆոնդերի՝ մեր կողմից անցկացված շատ մանրակրկիտ ուսումնասիրությամբ աշխատանքում այս խնդիրներին տալ միանգամայն վերջնական և սպառիչ պատասխաններ:

Աշխատանքի համար անգնահատելի նշանակություն են ունեցել նաև սկզբնաղբյուրի արժեք ստացած գրավոր աղբյուրները, մասնավորապես Համառուսաստանյան 1897 և 1917թթ. մարդահամարների ու 1916թ. գյուղատնտեսական հաշվեգրման նյութերը, ինչպես նաև Ն.Վորոնովի, Վ.Վասիլևի, Ա. Մարչենկոյի և այլոց կողմից հրատարակված վիճակագրական նյութերն ու փաստաթղթերի ժողովածուները:⁶

*

ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին, Ատենախոսություն պատմ. գիտ. թեկ., Եր., 1991: **Հովհաննիսյան Կ.**, Պարսկահայերի գաղթը և Ներսես Աշտարակեցին, Աշխատություններ Հայաստանի պատմության Պետական թանգարանի, Եր., 1975, N 4: **Գարրինյան Մ.**, Արևմտահայերի 1829-1830 թթ.-ի գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, Եր., 1974, N 2: **Նույնի**, Էջեր Ախալցխայի և Ախալքալաքի հայերի 1829-30թթ. գաղթի պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), Եր., 1973, N 2: **Նույնի**, Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830թթ. գաղթի վերաբերյալ, Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 1973, N 2: **Նույնի**, Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830гг., ԲՀԱ, Եր., 1977, N 3: **Հայրապետյան Ա.**, Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005:

⁶ Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издал Н. Воронов, т. 1, Тифлис, 1869; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Издан по распоряжению Главноначальствующего гражданской частью на Кавказе, Закавказским статистическим комитетом, Тифлис, 1893; Эриванская губерния, Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, СПб., 1853.

* *

Իր գոյության ողջ ընթացքում (1840-1924թթ.) Ալեքսանդրապոլի գավառի սահմանները պարբերաբար ենթարկվել են փոփոխությունների: Դեռևս XIX դարասկզբին գավառի տարածքը Փամբակ-Շորագյալի ուղեմաս (դիստանցիա) անվամբ մտնում էր Վրացական նահանգի կազմի մեջ

1840թ. ապրիլի 10-ին Անդրկովկասը բաժանվեց երկու խոշոր հատվածների, և կառուցվածքային այս վերափոխման արդյունքում ի հայտ եկավ նաև մեր ուսումնասիրության առարկա Ալեքսանդրապոլի գավառը:⁷

Արևելյան Հայաստանի հյուսիսային հատվածում հայաշատ հողերը մեկ վարչական միավորի կազմում ունենալու առաջին նախագիծը առաջարկվել էր զեներալ Ի. Պասկևիչի կողմից դեռևս 1830թ. ապրիլին և ենթադրում էր Հայկական մարզի մեջ ի շարս Երևանի, Կողբի և Նախիջևանի շրջանների, նաև Փամբակ-Շորագյալի շրջանի գոյությունը⁸: Նախագիծը մերժվեց, իսկ կառավարությունն ընտրեց նորանվաճ երկրամասի ռուսականացման աստիճանական տարբերակը:

Ալեքսանդրապոլի գավառ ստեղծելու հարցն առաջին անգամ բարձրաձայնել է Ն. Նեֆեդևը, որը դեռևս 1838թ. հոկտեմբերի 2-ին «Անդրկովկասի երկրամասի բարեկարգման կոմիտեում» երկրամասի նոր վարչատարածքային բաժանման Գանի նախագծի քննարկման ժամանակ առաջարկում էր Հայկական մարզի տարածքը բաժանել երկու գավառների՝ Նախիջևանի, որի մեջ էին մտնելու արդեն գոյություն ունեցող Նախիջևանի և Երևանի գավառները, և Ալեքսանդրապոլի, որ կազմավորվելու էր Արևելյան Հայաստանի հյուսիսային՝ զերազանցապես հայաշատ տարածքներից⁹: Թեև Հայկական մարզի բարենորոգման Ն. Նեֆեդևի նախագիծը մերժվեց, այնուամենայնիվ Փամբակ-Շորագյալի ուղեմասի հիմքի վրա նոր, ավելի մեծ վարչական միավոր ստեղծելու գաղափարը մնաց և ի կատար ածվեց արդեն 1840թ.՝ երկրամասը Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի բաժանելիս: Միայն վերոհիշյալ կառուցվածքային վերափոխման շնորհիվ էր, որ Անդրկովկասում ի հայտ եկավ նոր վարչատարածքային միավոր՝ Ալեքսանդրապոլի գավառը, որն ի թիվս տա-

⁷ Ալեքսանդրապոլի գավառի ստեղծման մասին մանրամասն տե՛ս Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005, էջ 136-140: Тунян В., Восточная Армения в составе России, Ер., 1989, стр. 39.

⁸ Անդրկովկասյան երկրամասում վարչատարածքային բարեփոխումներ անցկացնելու այս նախագիծը 1830թ. ապրիլի վերջին ներկայացվեց Նիկոլայ Ա-ին, այնուհետև բավականին տևական մի ժամանակահատվածի մեջ քննարկվեց տարբեր ստյաններում, իսկ 1833թ. մայիսի 12-25-ին սենատորներ Պ. Քուրայիսովի և Ե. Մեչնիկովի դիտողություններով ներկայացվեց Պետական խորհուրդ, որտեղ և վերջնականորեն մերժվեց (մա՛ն ը ա՛մ ա՛ս և տե՛ս ՅԱԱ ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 85, էջ 1-14: Акты собранные Кавказской Археографической Коммиссией (АКАК), т. 7, Тифлис, 1876, стр. 37-38):

⁹ Тунян В., նշվ. աշխ., էջ 38:

սը այլ գավառների մտավ Վրացա-իմերեթական նահանգի կազմի մեջ¹⁰: Գավառը տարածքային տեսակետից գրեթե ամբողջովին պարփակվում էր նախկին Փամբակ-Շորագյալի դիստանցիայի սահմանների մեջ (արևմուտքում սահմանակից էր Կարսի փաշայությանը, հյուսիսում և արևելքում՝ Բորչալուի, իսկ հարավում՝ Երևանի գավառներին)¹¹:

1844թ. ստեղծվեց Կովկասի փոխարքայությունը, իսկ 1846թ. իրագործվեց երկրամասի հաջորդ վարչատարածքային ձևափոխությունը՝ Անդրկովկասը տրոհվեց չորս նահանգների: Ալեքսանդրապոլի գավառը, իր Լոռու, Փամբակի և Շորագյալի տեղամասերին ի հավելում ստանալով գերազանցապես հայ տարրով բնակեցված Ախալքալաքի տեղամասը, մտավ Թիֆլիսի նահանգի մեջ:¹² Հարկ է նշել, որ Անդրկովկասի 1846թ. վորոնցովյան վարչատարածքային բաժանումն այս առումով միակն էր, որ նպաստեց ոչ վաղ անցյալում կազմավորված Ալեքսանդրապոլի գավառի տարածքի ընդլայնմանն ի հաշիվ գերազանցապես երզրումցիներով բնակեցված Ախալքալաքի տեղամասի: Բանն այն է, որ հետայսու երկրամասում անցկացված վարչատարածքային ձևափոխությունները, եթե այս կամ այն չափով առնչվեցին Ալեքսանդրապոլի գավառի հետ, ապա միայն տարածքային կորուստներ պատճառեցին նրան:

Երեք տարի անց Անդրկովկասը նորից հայտնվեց վարչատարածքային բաժանման փաստի առջև: 1849թ. հունիսի 9-ին փոխարքայի հրամանով Թիֆլիսի ու Շամախու նահանգների որոշ տարածքների միավորմամբ ստեղծվեց Երևանի նահանգը: Նորաստեղծ նահանգի կազմի մեջ մտան Երևանի, Նախիջևանի, Օրդուբադի, Նոր Բայազետի գավառները և Ալեքսանդրապոլի գավառն առանց Ախալքալաքի տեղամասի:¹³ Վերջինս անհասկանալի պատճառներով Ալեքսանդրապոլի գավառի կազմից հանվեց և միացվեց Թիֆլիսի նահանգի Քութայիսիի գավառին:¹⁴

Ի դեպ, այդքանով գավառի տարածքային ձևափոխությունները չավարտվեցին. Ախալքալաքի տեղամասի կորստից ընդամենը 13 տարի անց

¹⁰ Кавказский календарь на 1852 год, Тифлис, 1851, отд. III, стр. 273.

¹¹ Ալիշան Լ., Տեղագիր Հայոց Մեծաց, Չ.Հ.Գ.-ն տիտղոսաբերք չունի, Սբ Դևագար, 1855, էջ 63-64: Մրհեղեան Ա., Մեծ Դարաքիլիսայի ներկայ վիճակը, «Մուրճ», N 10, հոկտեմբեր, Թիֆլիս, 1893, էջ 1579-1581:

¹² Մանրամասն տե՛ս Օհանյան Ա., Վարչա-տերիտորյալ բաժանումները նախասովետական Հայաստանում, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 5/51/, Երևան, 1955, էջ 85-89:

¹³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 715, քթ. 1-2: Подесаул Ив., Позаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. 1, вып. 1, Тифлис, 1890, стр. 14-15: К столетию присоединения Грузии к России. Утверждение русского владычества на Кавказе, т. 12, Тифлис, 1901, стр. 378.

¹⁴ Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ер., 1993, док. 55, стр. 200.

Ալեքսանդրապոլի գավառից անջատվեց և Թիֆլիսի նահանգին միացվեց նաև Լոռին, որ կազմում էր Ալեքսանդրապոլի գավառի Փամբակ ոստիկանական տեղամասի մեծագույն մասը:¹⁵

Սրանք էին Անդրկովկասյան երկրամասում անցկացված այն վարչատարածքային ձևափոխությունները, որ XIX դարի 40-ական թթ. սկզբներին հանգեցրին նախ Ալեքսանդրապոլի գավառի ստեղծմանը, ապա նաև 1849թ. նրա՝ Երևանի նորակազմ նահանգի մեջ մտնելուն:

XIX դարասկզբին մարդաթափ ու կիսավեր Փամբակի և Շորագյալի սուլթանությունների հիմքի վրա ստեղծված Ալեքսանդրապոլի գավառն արդեն նույն դարավերջին բաժանվում էր ոստիկանական չորս տեղամասերի և գյուղական 27 հասարակությունների՝ 160 գյուղերով. 1. Աղբաբայի ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 6 հասարակությունից (պրիստավը նստում էր Ալեքսանդրապոլից 22 վերստ հեռու գտնվող Աղբաբա գյուղում), 2. Ճրզխլարի (Յողամարգ) ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 5 հասարակությունից (պրիստավը նստում էր Ալեքսանդրապոլում), 3. Հոռոմի ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 5 հասարակությունից (պրիստավը նստում էր Ալեքսանդրապոլից 14 վերստ հեռու՝ Հոռոմ գյուղում), 4. Մեծ Ղարաքիլիսայի (Վանաձոր) ոստիկանական տեղամաս՝ կազմված գյուղական 11 հասարակությունից (պրիստավը նստում էր Մեծ Ղարաքիլիսա գյուղում):¹⁶

Գավառը ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական մի շարք կարևոր հանգամանքների բերումով XIXդ. կեսերից դարձավ նոր ձևավորված Երևանի նահանգի հայաշատ գավառներից մեկը, որ զբաղեցնում էր նահանգի տարածքի 13%-ը (3680քառ. կմ)¹⁷՝ հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակցելով Թիֆլիսի նահանգին Ճրզխլարի և Մեծ Ղարաքիլիսայի տեղամասերով, հարավից՝ Էջմիածնի գավառին Աղբուլաղի (Լուսաղբյուր) տեղամասով, արևելքից՝ Նոր Բայազետի գավառին Հոռոմի ու Մեծ Ղարաքիլիսայի տեղամասերով և արևմուտքից՝ Կարսի վիշապությանը (հետագայում նաև մարզին)՝ սահմանագիծ ջրբաժան ունենալով Ախուրյան գետը:¹⁸

¹⁵ Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, стр. 108-109.

¹⁶ Свод статистических данных о населении Закавказского края извлеченных из посемейных списков 1886г., Издан по распоряжению Главноначальствующего гражданской частью на Кавказе, Закавказским статистическим комитетом, Тифлис, 1893, стр., IX-X.

¹⁷ Մարգարյան Հ., Ալեքսանդրապոլի գավառի էթնոաշխարհագրական բնութագիրը XIX դարի վերջերին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1998, էջ 132-133:

¹⁸ Թովիչեան Ե., Ալեքսանդրապոլի գավառ, «Աղբյուր», N 7, 14-րդ տարի, Թիֆլիս, 1896, էջ 268-269: Հակոբյան Թ.Խ., Մելիքբախյան Ս.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Եր., 1986, էջ 74-ի քարտեզ:

XIX դարի վերջին քառորդին Անդրկովկասում վարչատարածքային բարեփոխումներ այլևս չեղան, և Ալեքսանդրապոլի գավառի սահմաններն անփոփոխ մնացին մինչև XX դարասկիզբ:

1905-1907թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին առաջ քաշվեցին պետական իշխանության ապակենտրոնացման, տեղական ինքնակառավարման, ինչպես նաև ազգային-էթնիկ վարչատարածքային նոր բաժանման, ամբողջ կայսրությունում դաշնային կառուցվածք ստեղծելու ծրագրեր: Առաջին քննարկումներն սկսվեցին միայն փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսական կայսրությունը թևակոխեց զարգացման ժողովրդավարական փուլ:

Անդրկովկասյան երկրամասի վարչական վերաբաժանման և տեղական ինքնակառավարման խնդիրը քննարկելու համար 1917թ. գարնանը, Պետրոգրադում ժամանակավոր կառավարության որոշմամբ, ՆԳ նախարարությանը կից ստեղծվեց հատուկ հանձնաժողով Ջուրաբ Ավալովի գլխավորությամբ:¹⁹ Ելնելով Անդրկովկասը էթնիկ, տնտեսական ու աշխարհագրական տեսակետից միանման վարչատարածքային միավորների բաժանելու սկզբունքներից՝ հանձնաժողովը մշակեց ու 1917թ. ամռանը ՆԳ նախարարությանը ներկայացրեց երկրամասում վարչատարածքային բաժանում անցկացնելու նախագիծ. Երևանի, Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների ու Կարսի մարզի վերաձևափոխմամբ Անդրկովկասում ստեղծվելու էին նոր նահանգներ. Թիֆլիսի և Քութայիսիի՝ բնակեցված գերազանցապես վրացիներով, Բաքվի ու Ելիզավետպոլի՝ բնակեցված գերազանցապես մահմեդականներով, և Գանձակի, Ալեքսանդրապոլի ու Երևանի՝ բնակեցված գերազանցապես հայերով):²⁰ Փաստորեն, նախագծի համաձայն, հայկական նահանգների թիվն Անդրկովկասում նախկին մեկի փոխարեն հասնելու էր երեքի՝ 15 գավառներով:

Նախագծում լուրջ տեղ էր հատկացվում նաև Ալեքսանդրապոլի գավառին: Նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի հիմքի վրա ենթադրվում էր ստեղծել համանուն նահանգ (Ի դեպ, այս գաղափարն ամենևին էլ նորություն չէր, այլ ամրագրվել էր դեռևս 1840թ. ապրիլի 10-ի Անդրկովկասյան երկրամասում վարչատարածքային բարեփոխումներ անցկացնելու մասին

¹⁹ Հանձնաժողովի կազմում Չ. Ավալովից գատ ընդգրկված էին նաև Գ. Լորդկիպանիձեն ու Ս. Ավալիանին՝ վրացիներից, Ալ. Խատիսյանը և Ա. Շահխաթունյանը՝ հայերից, Խան Խոյսկին և Ա. Շեյխուլիսլամովը՝ թաթարներից, Վ. Ջաբաթիևը ու Ա. Նամխտովը՝ լեռնականներից (այս մասին մանրամասն տես՝ **Մելիքյան Վ.**, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, 1917թ. մարտ-հոկտեմբեր, Երևան, 1997, էջ 119-120):

²⁰ **Шахатуриян А.**, նշվ. աշխ., էջ 128-134:

օրենքում):²¹ Ալեքսանդրապոլի նահանգն ունենալու էր հինգ գավառներ, որոնցից՝

1. *Ալեքսանդրապոլի գավառը* կազմվելու էր նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառից՝ առանց I ոստիկանական տեղամասի (Փամբակ) և Էջմիածնի գավառի IV ոստիկանական տեղամասից:

2. *Ախալքալաքի գավառը* բաղկացած էր լինելու նախկին Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառից, Բորչալուի գավառի Թրիալեթի (Ծալկա) տեղամասի Աշկալայի, Նարդևանի ու Ավրավիի գյուղական հասարակություններից, Գորիի գավառի Բակուրիանի տեղամասի Մոլիտ ու Ղզրքիլիսա գյուղերից:

3. *Լոռու գավառը՝* նախկին Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Լոռու տեղամասից և նախկին Ալեքսանդրապոլի գավառի I ոստիկանական տեղամասից:

4. *Կարսի գավառը* ներառելու էր նախկին Կարսի օկրուգը:

5. *Կաղզվանի գավառը՝* նախկին Կաղզվանի օկրուգը:

Էթնիկ տեսանկյունից ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգն ունենալու էր հետևյալ պատկերը.²²

գավառ	ընդամենը	հայեր	%	մահմեդականներ	%	այլք	%
Ալեքսանդրապոլի	204000	170000	83	22000	11	12000	6
Ախալքալաքի	120000	94000	79	10000	8	16000	13
Լոռու	120000	92000	77	14000	12	14000	11
Կարսի	193000	83000	43	49000	25	61000	32
Կաղզվանի	82000	35000	43	26000	32	21000	23
ԸՆԴԱՄԵՆԸ	719000	474000	66	121000	17	124000	17

Անդրկովկասյան երկրամասում վարչատարածքային բաժանում անցկացնելու հատուկ հանձնաժողովի կազմած նախագիծը հավանություն գտավ ՆԳ նախարարության կողմից: Վերջինիս որոշմամբ ՕԶԱԿՈՄ-ին (Անդրկովկասյան հատուկ կոմիտե) կից Ա. Չխենկելու նախագահությամբ ստեղծվեց 15 հոգուց (յուրաքանչյուր ազգությունից՝ 5 ներկայացուցիչ) բաղկացած հատուկ կոմիտե՝ տեղում նախագիծը վերջնական տեսքի բերելու համար:

²¹ Полное собрание законов Российской империи, собрание второе, отд. I, Царствование государя императора Николая Первого, 1840 год, док. NN 13040-14140, СПб., 1841, док. 13368, стр. 238.

²² Шахатунян А., ցմվ. աշխ., էջ 133-134:

1917թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում կոմիտեն Թիֆլիսում կազմեց նոր նախագիծ, որը, ի դեպ, շատ քիչ էր տարբերվում նախարարության նախագծից: Ալեքսանդրապոլի նահանգի կտրվածքով այդ փոփոխությունները հետևյալն էին. Այսպես, եթե նախարարության նախագծով Փամբակը մտնելու էր Լոռու գավառի մեջ, ապա ՕԶԱԿՈՄ-ի նախագծով այն մնալու էր Ալեքսանդրապոլի գավառի մեջ, կամ, եթե նախարարության նախագծով Երևանի նահանգն ուներ Սուրմալուի գավառ, ապա ՕԶԱԿՈՄ-ի նախագծով այն վերացվում էր, և Ալեքսանդրապոլի նահանգի կազմում ստեղծվելու էր Կողքի գավառ՝ կազմված Էջմիածնի ու Սուրմալուի գավառներից և Կաղզվանի օկրուգի Նախիջևանի տեղամասից:²³ Այսինքն՝ ըստ նոր՝ ՕԶԱԿՈՄ-ի նախագծի՝ Ալեքսանդրապոլի նահանգը հինգի փոխարեն ունենալու էր վեց գավառ.

1. *Ալեքսանդրապոլի գավառը*՝ կազմվելու էր նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի II, III և IV ոստիկանական տեղամասերից ու I ոստիկանական տեղամասի Նալբանդի գյուղական հասարակությունից:

2. *Կողքի գավառը*՝ նախկին Սուրմալուի գավառի III ոստիկանական տեղամասից և I ոստիկանական տեղամասի Ալիդոչաղի գյուղական հասարակությունից, Էջմիածնի գավառի IV ոստիկանական տեղամասից՝ առանց Կոշի գյուղական հասարակության, III ոստիկանական տեղամասի Շահրիյարի գյուղական հասարակության Հաջի Բայրամ, Հեյրիբեկյու, Ասսար, Շահվարուտ, Խոջա Յարալու գյուղերից և նախկին Կաղզվանի օկրուգի Նախիջևանի ոստիկանական տեղամասից:

3. *Լոռու գավառը*՝ նախկին Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի I ոստիկանական տեղամասից՝ առանց Նալբանդի գյուղական հասարակության, նախկին Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Օպրետի, Ճոճկանի, Շինիխի և Շուլավերի գյուղական հասարակություններից, նույն գավառի Լոռու ոստիկանական տեղամասից և Ալավերդու ոստիկանական տեղամասից:

4. *Ախալքալաքի գավառը*՝ նախկին Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառից, Բորչալուի գավառի Թրիալեթի (Ծալկա) տեղամասի Աշկալայի, Նարդևանի ու Ավրավլիի գյուղական հասարակություններից, նաև Գորիի գավառի Բակուրիանի տեղամասի Մոլիտ ու Ղզըլքիլիսա գյուղերից:

5. *Կարսի գավառը*՝ նախկին Կարսի օկրուգից:

6. *Կաղզվանի գավառը*՝ նախկին Կաղզվանի օկրուգից՝ առանց Նախիջևանի ոստիկանական տեղամասի:

Ըստ էթնիկ սկզբունքի՝ Անդրկովկասում վրացական, հայկական և թուրք-թաթարական վարչական խոշոր միավորներ ստեղծելու ՕԶԱԿՈՄ-ի նա-

²³ Шахатунян А., ցմվ. աշխ., էջ 136-155:

խագիծը հավանության արժանացավ Ա.Կերենսկու կառավարության կողմից, սակայն չիրագործվեց և չէր էլ կարող իրագործվել, որովհետև Պետրոգրադ հրավիրված թուրք-թաթարական պատվիրակությունը լիազորություններ չունենալու պատճառաբանությամբ հրաժարվեց ստորագրել փաստաթղթի տակ:²⁴ Հետևելով թուրք-թաթարական պատվիրակության օրինակին՝ 1917թ. աշնանը տարածքային սահմանազատման սկզբունքների հարցում իրենց դիրքորոշումն արմատապես փոխեցին նաև վրացիները:²⁵

Փաստորեն Ալեքսանդրապոլի գավառի հիմքի վրա համանուն նահանգ ստեղծելու և Հյուսիսային Հայաստանում հայկական հողերը մեկ վարչական միավորի կազմում հավաքելու գաղափարը մնաց անկատար: Ավելին, հաջորդ երեք տարիների ընթացքում տարածաշրջանում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք ընդհանրապես կասկածի տակ դրեցին Ալեքսանդրապոլի գավառի հետագա գոյության հարցը:

1917թ. նոյեմբերի 15-ին ՕԶԱԿՈՄ-ին փոխարինեց Անդրկովկասյան կոմիսարիատը՝ Եվգենի Գեգեչկորու գլխավորությամբ: Հանդես գալով Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների մեղմացման և ազգային հարցի լուծման խոստումներով՝ կոմիսարիատը նոյեմբերի 27-ին հատուկ դեկրետով երկրամասում մտցրեց զենստվային կառավարում: Այս համակարգը, սակայն, գործնական կիրառություն չգտավ, որովհետև հանգեցրեց Անդրկովկասի էթնիկ վերաբաժանման նույն բարդ խնդրին:²⁶

1918թ. փետրվարի 10-ին կոմիսարիատին փոխարինած Անդրկովկասյան սեյմը՝ Չխեիձեի նախագահությամբ, ընդհանուր անարխիայի ու թուրքական արշավանքի պայմաններում ընդհանրապես մոռացության տվեց ազգային ներքին սահմանազատումների խնդիրը, իսկ 1918թ. մայիսի վերջերին Անդրկովկասը բաժանվեց երեք անկախ հանրապետությունների:

Անկախությունը հայ ժողովրդին տրվեց չափազանց թանկ գնով: Բաթումում կնքված պայմանագրի համաձայն՝ նորանկախ Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր 12000 քառ. կմ: Նախկին Երևանի նահանգից Թուրքիային էին անցնում Սուրմալուի գավառն ամբողջությամբ, Էջմիածնի գավառի մեծ մասը, Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառների մի մասն ու Ալեքսանդրապոլի գավառը՝ բացառությամբ Մեծ Ղարաքիլիսայի ոստիկանա-

²⁴ Մանրամասն տե՛ս **Գևորգյան Ա.**, Տեղական ինքնակառավարման վերակազմակերպման խնդիրն Անդրկովկասում ժամանակավոր կառավարության օրոք (1917թ. փետրվար-հոկտեմբեր), ՀՀ ԳԱԱ ԾՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, Գյումրի, 2006, էջ 32-37:

²⁵ Մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 265-270:

²⁶ **Միմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, հ. 1, Երևան, 1996, էջ 647-648:

կան տեղամասի:²⁷ Հայ թուրքական նոր սահմանը «Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթգծից հասնում էր Աղբուլաղ գյուղից 5 կմ արևմուտք, այնուհետև՝ մինչև Խանվալի, որտեղից համարյա ուղիղ գծով հասնում էր Ալազյազ լեռան առավել բարձր գագաթը, որտեղից հասնում էր Էջմիածին-Սարդարապատ խճուղին, ապա շրջանցում էր Էջմիածինը 7 կմ տարածության վրա և շարունակում էր գնալ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուն զուգահեռ ուղղությամբ՝ մնալով նրանից մոտ 6 կմ հեռավորության վրա»:²⁸

Երկրի համար օրհասական այս պահին Երևանի Հայոց Ազգային խորհուրդն Արամ Մանուկյանի նախագահությամբ 1918թ. հունիսի 22-ին լուծարեց Թուրքիային անցած հայկական տարածքների պետական հաստատությունները, իսկ մեկ շաբաթ անց՝ հունիսի 29-ին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և պետական գույքի վարչությանը տեղեկացրեց ՀՀ տարածքը վարչական փոփոխության ենթարկելու և այն Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Դարալագյազի ու Դիլիջանի գավառների բաժանելու մասին:²⁹

Ինչ վերաբերում է գրավված շրջաններին, ապա թուրքերն այստեղ օսմանյան օրենքներ չմտցրին, այլ պահպանեցին տեղական՝ ցարական կառավարությունից մնացած օրենքներն ու վարչական կառույցները: Օրինակ, Ալեքսանդրապոլ քաղաքը գրավելու հաջորդ օրը թուրքական հրամանատարության կարգադրությամբ տեղի ունեցավ քաղաքացիների ընդհանուր ժողով, որտեղ ընտրվեց 29 հոգուց կազմված Քաղաքային խորհուրդ (16 հայ, 3 հույն, 3 մահմեդական, 3 ռուս, 2 վրացի և 2 հրեա): Վերջինս իր հերթին ընտրեց 15 հոգուց բաղկացած Քաղաքային վարչություն՝ կարգավորելու համար քաղաքի և ամբողջ գավառի վարչական, տնտեսական ու ուսումնական կյանքը: Միաժամանակ Ալեքսանդրապոլի գավառը բաժանվեց գյուղախմբերի: Քաղաքին ու գավառին վերաբերող բոլոր կարգադրությունները թուրքական իշխանություններն անում էին քաղաքային ինքնավարության միջոցով և նրա միջոցով էլ ընդունում խնդրագրեր: Քաղաքային ինքնավարությունն անմիջապես ենթարկվում էր տեղական իշխանության նախագահին (գավառապետ), իսկ վերջինս էլ՝ թուրքական բանակի հրամանատարին:³⁰

1918թ. նոյեմբերից թուրքական զորքերն սկսեցին հեռանալ գրավված տարածքներից, իսկ դեկտեմբերի 3-ին ՀՀ-ին անցած նոր շրջաններում ստեղծվեցին գավառային վարչության մարմիններ: Թուրքական վեցամսյա օկուպա-

²⁷ ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 23, քթ. 96-98:

²⁸ ՀԱԱ ֆոնդ 222, ցուցակ 1, գործ 24, ք. 332: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 քթ.), Երևան, 1972, էջ 533: Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 249:

²⁹ Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2005, էջ 211:

³⁰ ՀԱԱ ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 125, ք. 8:

ցիան խիստ բացասաբար ազդեց Ալեքսանդրապոլի գավառի կառուցվածքի ու սահմանների վրա. գավառը զրկվեց Մեծ Ղարաքիլիսայի տեղամասից, որը Դիլիջանի և Քարվանսարայի տեղամասերի հետ կազմեց Դիլիջանի գավառը:³¹ Այլևս երբեք Ալեքսանդրապոլի նախկին գավառի տարածքային ամբողջականությունը չվերականգնվեց, և նոր Ալեքսանդրապոլի գավառն իր 4 տեղամասերով նախկին 160-ի փոխարեն այժմ ուներ 129 գյուղ՝ 25 գյուղական հասարակություններով (նախկին 27-ի փոխարեն):³²

Երկրում կուտակված ռազմաքաղաքական, տնտեսական, սոցիալական ու ազգային խնդիրների առավել նպատակահարմար լուծումների որոնման հրամայական անհրաժեշտությունը հանգեցրեց ՀՀ տիրույթների նոր վերաձևման, որը կյանքի կոչվեց 1919թ. փետրվարի 26-ին: Մինիստրների խորհրդի որոշմամբ ՀՀ տարածքը բաժանվեց Նախիջևանի, Երևանի, Շարուրի, Էջմիածնի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Սուրմալուի, Դարալագյազի, Ղարաքիլիսայի (Լոռու) և Ալեքսանդրապոլի գավառների:

Նույն այդ վարչատարածքային բաժանման համաձայն՝ նորաստեղծ Ղարաքիլիսայի գավառը կազմվեց նախկին Ալեքսանդրապոլի գավառի I ոստիկանական տեղամասից (Մեծ Ղարաքիլիսայի) և Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի ամբողջ Լոռու շրջանից: Գավառը վերանվանվեց Լոռու և ուներ գյուղական 16 հասարակություն՝ Մեծ Ղարաքիլիսայի, Վոսկրեսենկոյի, Նալբանդի, Համամուլի, Սարաի, Գըշլաղի, Վարդնովի, Մեծ Բեքանդի, Յաղուբլիի, Դաթախչիի, Ալիխանի, Հայկական Ջելալօղլիի, Գյուլագարակի, Դսեղի, Չորագյուղի և Լոռուտի (Մինիստրների խորհրդի 1919թ. մայիսի 23-ի որոշմամբ Մեծ Ղարաքիլիսան գյուղից վերածվեց քաղաքի): Նախկին Ալեքսանդրապոլի գավառի մյուս երեք տեղամասերից (Ալեքսանդրապոլ, Քյավթառլի, Աղին) ստեղծվեց Ալեքսանդրապոլի նոր գավառ՝ գյուղական 13 հասարակություններով՝ Փոքր Ղարաքիլիսայի, Միրաքի, Նորաշենի, Քյաֆթառլիի, Արթիկի, Գըլղոչի, Դայդուլի Դազանչիի, Ալիխանի, Իլլի Դարաքիլիսայի, Հոռոմի, Տավշանդըշլաղի, Մոլլա Գյոկչայի և Մոգութլիի:³³

ՀՀ տարածքի վերաձևումը կատարվեց հապշտապ, ուներ լուրջ թերություններ և բնակչության ու հատկապես ալեքսանդրապոլցիների շրջանում դժգոհությունների տեղիք տվեց: Արդեն 1919թ. մարտի 20-ին Ալեքսանդրապոլի գավառային կոմիսարի՝ ՀՀ տարածքային վարչության և միլիցիայի կոմիսարին ներկայացված զեկուցագրում այդ կապակցությամբ ասվում էր. «...ավելի հար-

³¹ 1918թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Ղարաքիլիսայի և Դիլիջանի գավառները ժամանակավորապես միավորվեցին մեկ զինվորական օկրուգի մեջ (Մանրամասն տե՛ս ԶԱԱ ֆոնդ 203, ցուցակ 1, գործ 4, ք. 20:)

³² ՀԱԱ ֆոնդ 203, ցուցակ 1, գործ 4, ք. 20:

³³ ՀԱԱ ֆոնդ 203, ցուցակ 1, գործ 181, թթ. 7-8:

մար են համարում Ավդիբեկ, Ղարալ, Բեքանդ, Աղբուլաղ, Ղալթախչի, Ղարաբոյա, Գեղեղուշ գյուղերը հանել Լոռու գավառի Ղարաքիլիսայի գավառամասից և մտցնել Ալեքսանդրապոլի գավառի մեջ, քանի որ դրանք Ղարաքիլիսայից հեռու են 40, իսկ Ալեքսանդրապոլից 20 վերստ, և բնակչությունը կապված է Ալեքսանդրապոլի գավառի բնակչության հետ, ինչպես պատմական, այնպես էլ աշխարհագրական տեսակետից:³⁴ Հայաստանի ազգային արխիվում պահպանվել են նմանատիպ բովանդակությամբ տասնյակ զեկուցագրեր ու դիմումբողոքներ:³⁵

1920թ. մայիսի 25-ին ՀՀ պառլամենտի որոշմամբ նախկինում թույլ տրված թերացումները վերացնելու, կենտրոնի ու շրջանների միջև կապերը հստակեցնելու և տեղերում իշխանությունն ուժեղացնելու նպատակով կատարվեց վարչական նոր բաժանում. ՀՀ տարածքը բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Վանանդի, Սյունիքի և Շիրակի:³⁶ Վերջինի մեջ բացի Ալեքսանդրապոլի գավառից մտան Ղարաքիլիսայի գավառն ամբողջությամբ, Էջմիածնի գավառի Թալինի գավառամասը, Կարսի գավառի 5-րդ գավառամասն ամբողջությամբ, 1-ին և 2-րդ գավառամասերի որոշ մասեր՝ սկսած Չղրը լճի հարավային ափի Դաշքեռփի գյուղից խճուղով հարավ՝ Ներքին Փարկիթից կտրելով երկաթուղու ուղին մինչև Դայնալիխ գյուղը, Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայկական մասերը և Դիլիջանի գավառը (Դիլիջանի գավառը ժամանակավորապես զատվում է Շիրակի նահանգից, կազմում առանձին միավոր և ենթարկվում է ՆԳ նախարարությանը):

Վարչական այս բաժանումը ևս լուրջ դժգոհություններ առաջացրեց տեղերում, մասնավորապես Թալինում և Կարսում: Օրինակ, Թալինի հասարակության ժողովը կոմիսար Միքայել Թադևոսյանի գլխավորությամբ հունիսի 25-ին հեռագրով հայտնում էր Էջմիածնի գավառի կոմիսարին, որ ժողովուրդը համաձայն չէ միանալ Ալեքսանդրապոլի գավառին, որովհետև նախ տասնյակ տարիների ընթացքում կապված լինելով Էջմիածնի գավառին, ընտելացել և յուրացրել է այդ գավառի պայմանները, և հետո Թալինի շրջանի գյուղերի մեծ մասը ավելի մոտ է Էջմիածնին, քան Ալեքսանդրապոլին:³⁷

Նույնն էր նաև կարսեցիների դժգոհության պատճառը: Մայիսի 25-ի օրենքով Ալեքսանդրապոլի գավառին էր միացվել «Կարսի նահանգի այն մասը, որ մոտ էր գտնվում Ալեքսանդրապոլի պաշտպանական ամրություններին. սկսած այն կետից, ուր իրար են միանում Ղարսաչայն ու Արփաչայը, այնուհետև»

³⁴ Նույն տեղում, ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 135, ք. 29:

³⁵ Նույն տեղում, քթ. 3-15, քթ. 35-41:

³⁶ Նույն տեղում, գործ 26, ք. 56:

³⁷ «Շիրակի աշխատավոր», Ալեքսանդրապոլ, 1920, թիվ 25, էջ 2:

տև Ղարսաչայով բարձրացած մինչև Շահնագար և այնտեղից Կարախանչայով մինչև Ախալքալաքի սահման»:³⁸

ՆԳ նախարարությունը սրա անհրաժեշտությունը բացատրում էր հետևյալ կերպ. «Քանի որ զինվորական տեսակետից այս եռանկյունին ենթակա է Ալեքսանդրապոլի զինվորական հրամանատարությանը, անհրաժեշտ է, որ զինվորական և ադմինիստրատիվ իշխանությունները կարողանան խորհրդակցել և համերաշխությամբ վարեն գործերը: Դա անհրաժեշտ է նաև Ալեքսանդրապոլի պաշտպանության համար»:³⁹ Իրականում դրա կարիքը չկար, և անցած 40 տարիների ընթացքում այս եռանկյունին լինելով Կարսի նահանգի մեջ, երբևէ չէր խանգարել Ալեքսանդրապոլի պաշտպանության կազմակերպմանը:

1920թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի գավառը նորից գրավվեց թուրքերի կողմից, և, երբ հինգ ամիս անց ազատագրվեց, Հայաստանի Հանրապետությունն այլևս չկար:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ մինչև 1924թ. հունվարը, գավառը պահպանեց իր Ալեքսանդրապոլ անվանումը և ուներ յոթ տեղամաս (գավառակ)՝ Աղբաբայի, Դուզբենդի, Թալինի, Հաջիխալիլի, Ղզըլոջի, Մուլա Գյուլչայի և Քյաֆթառլիի: 1924-1930թթ. այն կոչվում էր Լենինականի գավառ: 1930թ. սկզբներին ՀԽՍՀ-ում գավառները՝ իբրև վարչական միավորներ, լուծարվեցին, և Լենինականի գավառը դարձավ Լենինականի շրջան, իսկ 1930-ական թթ. վերջերին ընդհանրապես վերացվեց:⁴⁰

Ա.Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

³⁸ Նույնը:

³⁹ ՀԱԱ ֆոնդ 201, ցուցակ 1, գործ 48, թ. 65:

⁴⁰ **Բոյաջյան Ա.**, Լենինականի գավառի սոցիալ-տնտեսական և տարածքային կազմակերպումը 1920-1940 թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 2, Գյումրի, 1999 էջ 218:

**ԳԼՈՒԽ 1. 1820 - 1830-ական թվականներ
ՓԱՄԲԱԿ-ՇՈՐԱԳՅԱԼԻ ՈՒՂԵՄԱՍ (1805-1840թթ.)**

ՓԱՄԲԱԿ-ՇՈՐԱԳՅԱԼԻ ՈՒՂԵՄԱՍԻ 1826թ. ԿԱՄԵՐԱԼ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄ⁴¹

*Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի 1826թ.
կամերալ ցուցակագրում⁴²*

աղյուսակ 1

գյուղեր	ընտ.	ար.	իգ.	ընդ.	ազգություն	դավանանք
1. Փոքր Ղարաքիլիսա	157	461	452	913	հայ	հայ առաքելական
2. Թաքնալի	3	13	10	23	--/--	--/--
3. Բայանդուր	46	173	152	325	--/--	--/--
4. Ղափլլի	16	48	40	88	--/--	--/--
5. Տավշանդշլաղ	32	134	128	262	--/--	--/--
6. Բանդևան	2	4	3	7	--/--	--/--
7. Թաթարական Գյոզալդարա	15	33	28	61	պարսիկ	շիա մահմեդական
8. Հոռոմ	63	236	194	430	հայ	հայ առաքելական
9. Չրախլի	2	3	2	5	--/--	--/--
10. Ղուլիջան	6	12	10	22	պարսիկ	շիա մահմեդական
11. Ղասմալի	2	2	2	4	թաթար	շիա մահմեդական
12. Թալիբողլի	1	1	1	2	հայ	հայ առաքելական
13. Փոքր Բեքանդ	14	47	43	90	--/--	--/--
14. Զյաֆթառլի	8	22	20	42	հայ	հայ կաթոլիկ

⁴¹ Այս և հաջորդ երեք աղյուսակները կազմվել են մեր կողմից՝ Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի 1826թ. կամերալ ցուցակագրման ձեռագիր մատյանների հաղորդած թվային տվյալների հիման վրա:

⁴² Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի գյուղական բնակավայրերի 1826-1832թթ. կամերալ ցուցակագրման ձեռագրերում Գյումրին չկա, թեև գյուղ էր և քաղաքի կարգավիճակ ստացավ միայն 1837թ.: Պատճառը հետևյալն էր. XIX դ. 20-ական թվականների սկզբներից կառավարական շրջանակներում արդեն կարծիք էր ձևավորվել Գյումրին քաղաքի վերածելու մասին, ուստի և մարդահամար անցկացնելիս բնակավայրը որպես գյուղ չէին դիտարկում (մանրամասն տե՛ս **Акопян Т.**, Развитие Еревана после присоединения Восточной Армении к России, Сборник документов, 1801-1917гг, Ер., 1978, стр. 79)

15. Մեջիթի	14	38	34	72	հայ	հայ առաքելական
16. Դուքնիդշլադ	2	3	2	5	--/--	--/--
17. Մեծ Բյափանակ	20	68	54	122	--/--	--/--
18. Հաջինազար-Դուլի	30	106	82	188	--/--	--/--
19. Եսաուլ	24	93	74	167	--/--	--/--
20. Իլի Դարաքիլիսա	1	2	2	4	--/--	--/--
21. Փոքր Դուլիջան	23	73	57	130	--/--	--/--
22. Փալուքի	1	5	1	6	հայ	հայ կաթոլիկ
23. Դուզբենդ	8	29	22	51	հայ	հայ առաքելական
24. Արթիկ	1	2	2	4	--/--	--/--
25. Մեծ Զեքի	5	9	8	17	--/--	--/--
ԸՆԴԱՍԵՆԸ	496	1617	1423	304 0		

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 87, քթ. 1-157: Բնագիր: Չեռագիր:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի գյուղական բնակչության էթնոժողովրդագրական դրությունը 1826թ. կամերալ ցուցակագրման տվյալներով
աղյուսակ 2

ազգություն	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%	գյուղերի թիվ
հայ	473	1570	1383	2953	95.4	22 (լրիվ)
պարսիկ	21	45	38	83	4.2	2 (լրիվ)
թաթար	2	2	2	4	0.4	1 (լրիվ)
ԸՆԴԱՍԵՆԸ	496	1617	1423	3040	100	25 (լրիվ)

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 87, քթ. 1-157: Բնագիր: Չեռագիր:

*Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի գյուղական բնակչության կրոնադավանաբանական պատկերը 1826թ. կամերալ ցուցակագրման տվյալներով*⁴³
աղյուսակ 3

դավանանք	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%	գյուղերի թիվ
հայ առաքելական ⁴⁴	464	1543	1362	2905	94	20 (լրիվ)
հայ կաթոլիկ	9	27	21	48	1.4	2 (լրիվ)
շիա մահմեդական	23	47	40	87	4.6	3 (լրիվ)
ԸՆԴԱՍԵՆԸ	496	1617	1423	3040	100	25 (լրիվ)

⁴³ Եթե մարդահամար անցկացնող ռուս վիճակագիրները քրիստոնյաներին պարտադիր բաժանում էին նաև ըստ ազգությունների, ապա մահմեդականների ազգային պատկանելությունը նշում էին հազվադեպ:

⁴⁴ Ռուսական իշխանությունների կողմից անցկացվող բոլոր մարդահամարներում «հայ առաքելականի» փոխարեն գրված է «հայ գրիգորյան» կամ «հայ լուսավորչական»: Մենք առավել ընդունելի ենք համարում «հայ առաքելական» տարբերակը:

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 87, թթ. 1-157: Բնագիր: Չեռագիր:

ՓԱՄԲԱԿ-ՇՈՐԱԳՅԱԼԻ ՈՒՂԵՄԱՍԻ 1832թ. ԿԱՄԵՐԱԼ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄ⁴⁵

Գյուղնու էթնոտոլոլրդագրական դրուքյունը 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով

աղյուսակ 1

ազգությունը	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%
հայ	1296	3821	3139	6960	96
պարսիկ	40	119	98	217	3
հույն	14	40	33	70	1
ԸՆԴԱՄԵՆԸ	1350	3980	3270	7250	100

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83, թթ. 1-274, գործ 84,թթ. 1-380: Բնագիր: Չեռագիր:

Գյուղնու կրոնադավանարանական պատկերը 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով

աղյուսակ 2

դավանանք	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%
հայ առաքելական	1288	3806	3110	6960	95.4
հայ կաթոլիկ	8	15	29	44	0.6
ուղղափառ	14	40	33	73	1
չիա մահմեդական	40	119	98	217	3
ԸՆԴԱՄԵՆԸ	1350	3980	3270	7250	100

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83, թթ. 1-274, գործ 84,թթ. 1-380: Բնագիր: Չեռագիր:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի 1832թ. կամերալ ցուցակագրում

աղյուսակ 3

գյուղեր	ընտ.	ար.	իգ.	ընդ.	ազգություն	դավանանք
1. Դահարլի	64	183	160	343	հայ	հայ առաքելական
2. Բայանդուր	52	165	138	303	--/--	--/--
3. Ղափըլի	24	70	57	127	--/--	--/--
4. Քյալալի	12	42	32	74	--/--	--/--
5. Տավշանդշլաղ	27	78	64	142	--/--	--/--
6. Ղազարապատ	54	194	128	322	--/--	--/--
7. Մվանվերդի	42	138	119	257	--/--	--/--
8. Աղին	28	79	62	141	--/--	--/--
9. Ղեղաչ	17	50	44	94	--/--	--/--

⁴⁵ Ստորև ներկայացվող տասնյոթ աղյուսակները կազմել ենք Փամբակ-Շորագյալի ուղեմասի 1832թ. կամերալ ցուցակագրման հաղորդած թվային տվյալների հիման վրա:

10. Չիրպիլի	17	68	48	116	--/--	--/--
11. Բոզդողան	13	34	36	70	--/--	--/--
12. Ղզըքիլիսա	26	86	68	154	--/--	--/--
13. Հոռոմ	59	167	145	312	--/--	--/--
14. Սոնգուալի	17	63	31	94	--/--	--/--
15. Սարիբաշ	8	21	21	42	--/--	--/--
16. Արմութի	23	62	52	114	--/--	--/--
17. Մահմուդջուղ	60	212	137	349	--/--	--/--
18. Ղիչաղ	13	37	46	83	--/--	--/--
19. Բաշգյուղ	18	87	62	149	--/--	--/--
20. Փոքր Արըխավալի	13	41	31	72	--/--	--/--
21. Մեծ Արըխավալի	39	127	88	215	--/--	--/--
22. Եզանլար	34	112	93	205	--/--	--/--
23. Ղուլիջան	34 6	99 12	80 10	179 22	հայ պարսիկ	հայ առաքելական շիա մահմեդական
24. Ղասամալի	16 2	48 2	39 2	87 4	հայ թաթար	հայ առաքելական շիա մահմեդական
25. Փոքր Բեքանդ	26	96	82	178	հայ	հայ առաքելական
26. Զյաֆթառլի	23	74	60	134	հայ	հայ կաթոլիկ
27. Ղազանչի	52	168	113	281	հայ	հայ առաքելական
28. Մեջիթլի	31	135	96	231	--/--	--/--
29. Ղուքնիդշլաղ	7 2	25 3	11 2	36 5	հայ թաթար	հայ առաքելական շիա մահմեդական
30. Իմիլիսանլի	30	104	86	190	հայ	հայ առաքելական
31. Թալիբուլի	18	60	54	114	--/--	--/--
32. Ճլովխանլի	19	74	51	125	--/--	--/--
33. Մոլլա Գյոկչա	59	225	146	371	--/--	--/--
34. Բողազբեսան	35	101	82	183	--/--	--/--
35. Սոգութի	74	229	193	422	--/--	--/--
36. Թոմարտաշ	32	112	90	202	--/--	--/--
37. Մեծ Զյափանակ	71	235	150	385	--/--	--/--
38. Չրախլի	16	61	39	100	--/--	--/--
39. Փոքր Զյափանակ	17	68	50	118	--/--	--/--
40. Չոռլի ⁴⁶	5	19	8	27	--/--	--/--

⁴⁶ XIX դարում գյուղը հայտնի էր նաև Բոստանչի խարաբա անունով:

41. Փալոսթի	13	26	34	60	հայ	հայ կաթոլիկ
42. Հաջինազար-Ղուլի	42	137	90	227	հայ	հայ առաքելական
43. Գյուրջի Յոլ	27	104	76	180	--/--	--/--
44. Շիշթափա	10	34	30	64	հայ	հայ կաթոլիկ
45. Ծվխլար	24	102	72	174	հայ	հայ առաքելական
46. Թաքնալի	20	64	66	130	--/--	--/--
47. Ալլահքիլիսա	7	22	6	28	թաթար	շիա մահմեդական
48. Բանդևան	27	107	96	203	հայ	հայ առաքելական
49. Ջելաթկեչուտ	33	110	97	207	--/--	--/--
50. Դարբանդ	25	91	70	161	--/--	--/--
51. Սարիար	42	115	101	216	--/--	--/--
52. Շիրվանջուղ	56	169	152	321	--/--	--/--
53. Փոքր Քեթի	18	39	64	103	--/--	--/--
54. Նորաշեն	33	93	70	163	--/--	--/--
55. Թափաղուլակ	27	92	66	158	հայ	հայ կաթոլիկ
56. Իլիսիաքի	69	203	131	334	հայ	հայ առաքելական
57. Դըրիդագիրման	37	107	75	182	հայ	--/--
58. Ղուղաթ	23 2	64 5	58 3	122 8	հայ քուրդ	հայ առաքելական սունի մահմեդական
59. Հայ. Գյոզաղարա	16	56	45	101	հայ	հայ առաքելական
60. Ջաջուռ	72	236	148	384	--/--	--/--
61. Աղքիլիսա	37	117	100	217	--/--	--/--
62. Արդիսվալի – 3	32	92	78	170	--/--	--/--
63. Դոնախոռան	40	130	95	225	--/--	--/--
64. Թոփառլի	52	141	98	239	--/--	--/--
65. Օրթաքիլիսա	35	109	78	187	--/--	--/--
66. Մեծ Քեթի	47	136	96	232	--/--	--/--
67. Եսաուլ	34	108	75	183	--/--	--/--
68. Կապս	31	64	54	118	--/--	--/--
69. Իլլի Դարաքիլիսա	32	91	73	164	--/--	--/--
70. Ներքին Ղանլիջա	14	44	40	84	--/--	--/--
71. Վերին Ղանլիջա	23	66	45	111	--/--	--/--
72. Արթիկ	101	336	307	643	--/--	--/--

73. Փոքր Ղարաքիլիսա	100	293	244	537	--/--	--/--
74. Գուզբենդ	46	187	191	378	--/--	--/--
75. Գիրաքլար	31	99	75	174	--/--	--/--
76. Թաթարական Գյոզալդարա	15	33	28	61	պարսիկ	շիա մահմեդական
ԸՆԳԱՍՇՆԸ	2528	8088	6333	14421		

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, 86, 87: Բնագիր: Չեռագիր
**Փամբակ-Շորագյալի ուղեմասի Փամբակի տեղամասի 1832թ. կամերալ
ցուցակագրում**⁴⁷

աղյուսակ 4

գյուղերը	ընտ.	ար.	իգ.	ընդ.	ազգութիւն	դավանանք
1. Աղբուլաղ	37	152	-----	-----	հայ	հայ առաքելական
2. Ղարաքոյա	12	58	-----	-----	--/--	--/--
3. Ղալթախչի	61	194	-----	-----	--/--	--/--
4. Ավդիբեկ	39	126	-----	-----	--/--	--/--
5. Մեծ Բերանդ	133	505	-----	-----	--/--	--/--
6. Ղարալ	32	109	-----	-----	--/--	--/--
7. Նալբանդ	42	161	-----	-----	--/--	--/--
8. Գյուլլիջա	17	59	-----	-----	հայ	հայ կաթոլիկ
9. Գոզարան	22	49	-----	-----	--/--	--/--
10. Համամլի	125	466	-----	-----	հայ	հայ առաքելական
11. Վարդնով	62	185	-----	-----	--/--	--/--
12. Ղաչաղան	20	59	-----	-----	--/--	--/--
13. Գուրսալի	23	80	-----	-----	թաթար	շիա մահմեդական
14. Մարալ	18	51	-----	-----	թաթար	սունի մահմեդական
15. Հաջիդարա	32	137	-----	-----	--/--	--/--
16. Հայդարլի	8	26	-----	-----	--/--	--/--
17. Գալլավար	35	114	-----	-----	--/--	--/--
18. Արջուտ	15	66	-----	-----	--/--	--/--
19. Դանջուղազ	9	37	-----	-----	թաթար	շիա մահմեդական
20. Գարբազ	13	58	-----	-----	հայ	հայ առաքելական

⁴⁷ Քանի որ, ի տարբերություն Շորագյալի, Փամբակի տեղամասի XIX դարի 30-40-ական թվականների ժողովրդագրական դրությունը ներկայացնող թվային տվյալները վերաբերում են միայն արական սեռին, ապա մենք ևս, անճշտություններից խուսափելու համար, ստորև Փամբակ-Շորագյալի ուղեմասին (1832թ.) կամ Ալեքսանդրապոլի գավառին (1842թ.) վերաբերող ընդհանուր թվային տվյալները ներկայացնում ենք միայն ըստ արական սեռի:

21. Ղշլաղ	51	223	-----	-----	--/--	--/--
22. Մեծ Ղարաքիլիսա	141	481	-----	-----	--/--	--/--
23. Վարդանի	27	82	-----	-----	թաթար	սունի մահմեդական
24. Յադուրի	22	105	-----	-----	հայ	հայ առաքելական
25. Բոզիքենդ	46	212	-----	-----	--/--	--/--
26. Շահալի	20	113	-----	-----	--/--	--/--
27. Դարաքենդ	14	39	-----	-----	--/--	--/--
28. Դուրթան	37	187	-----	-----	--/--	--/--
29. Վարդաբլուր	23	75	-----	-----	--/--	--/--
30. Հոբարձի	11	32	-----	-----	--/--	--/--
31. Գյուլագարակ	36	106	-----	-----	--/--	--/--
32. Հերիեր	35	109	-----	-----	--/--	--/--
33. Ջելալօղլի	39	149	-----	-----	--/--	--/--
34. Ագարակ	11	59	-----	-----	--/--	--/--
35. Հայդարբեկ	39	145	-----	-----	--/--	--/--
36. Մեծ Ղարաքիլիսա -2	24	78	-----	-----	հայ	հայ կաթոլիկ
37. Շահնագար	48	123	-----	-----	--/--	--/--
ԸՆԴԱՍԵՆԸ	1379	5010	-----	-----		

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82, թթ. 1-552: Բնագիր: Չեռագիր:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի գյուղական բնակչության էթնոժողովրդագրական դրությունը 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով
աղյուսակ 5

ազգություն	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%	գյուղերի թիվ
հայ	2494	8011	6282	14293	98.7	70 (լրիվ), 4 (թաթարների, պարսիկների և քրդերի հետ խառը)
պարսիկ	21	45	38	83	0.8	1 (լրիվ), 1 (հայերի հետ խառը)
թաթար	11	27	10	37	0.4	1 (լրիվ), 2 (հայերի հետ խառը)
քուրդ	2	5	3	8	0.1	1 (հայերի հետ խառը)
ԸՆԴԱՍԵՆԸ	2528	8088	6333	14421	100	72 (լրիվ), 4 (խառը բնակչությամբ)

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, 86, 87: Բնագիր: Չեռագիր:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի գյուղական բնակչության կրոնադավանաբանական պատկերը 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով
աղյուսակ 6

դավանանք	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%	գյուղերի թիվ
----------	------	-----	-----	------	---	--------------

հայ առաքելական	242 1	7785	6092	13877	95.8	66 (լրիվ), 4 (շիա և սունի մահմեդականների հետ խառը)
հայ կաթոլիկ	73	226	190	416	2.9	4 (լրիվ)
շիա մահմեդական	32	72	48	120	1.2	2 (լրիվ), 2 (հայ առաքելականների հետ խառը)
սունի մահմեդական	2	5	3	8	0.1	1(հայ առաքելականների հետ խառը)
ԸՆԴԱՍԵՆԸ	2528	8088	6333	14421	100	72 (լրիվ), 4 (խառը բնակչությամբ)

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, 86, 87: Բնագիր: Չեռագիր:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի Փամբակի տեղամասի գյուղական բնակչության էթնոժողովրդագրական դրությունը 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով
աղյուսակ 7

ազգություն	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%	գյուղերի թիվ
հայ	1212	4417	-----	-----	88	29 (լրիվ)
թաթար	167	593	-----	-----	12	8 (լրիվ)
ԸՆԴԱՍԵՆԸ	1379	5010	-----	-----	100	37 (լրիվ)

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82, թթ. 1-552: Բնագիր: Չեռագիր:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի Փամբակի տեղամասի գյուղական բնակչության կրոնադավանաբանական պատկերը 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով
աղյուսակ 8

դավանանք	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%	գյուղերի թիվ
հայ առաքելական	1101	4108	-----	-----	80	25 (լրիվ)
հայ կաթոլիկ	111	309	-----	-----	8	4 (լրիվ)
շիա մահմեդական	32	117	-----	-----	2.2	2 (լրիվ)
սունի մահմեդական	135	476	-----	-----	9.8	6 (լրիվ)
ԸՆԴԱՍԵՆԸ	1379	5010	-----	-----	100	37 (լրիվ)

ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82, թթ. 1-552: Բնագիր: Չեռագիր:

Փամբակ-Շորագյալի ուղեմասի գյուղական բնակչության էթնոժողովրդագրական դրությունը 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով
աղյուսակ 9

ազգություն	ընտ.	ար.	իգ.	ընդ.	%	գյուղերի թիվ
հայ	3706	12428	-----	-----	94.8	99 (լրիվ), 4 (թաթարների, պարսիկների և քրդերի հետ խառը)
